Ախլաթյան

Բնակչություն՝ 588

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 118 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1750 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Ախլաթյանը գտնվում է Սիսիան գետի աջ վտակ՝ այրի գետի աջ ափին, հարթավայրում, և Սյունիքի մարզի հնագույն բնակավայրերից է: Ախլաթյան անունով գյուղ հիշատակվում է 1951 թվականից, իսկ Տաթևի վանքի նոր հարկացուցակում նշված է Ալխաթյան ձևով: Ըստ ավանդության, Ախլաթյանի տեղում եղել է արոտավայր, որի մեջ՝ «Ալխաթ» տեսակի մեծ տանձի ծառ, որից էլ իբր ծագել է գյուղի անունը:
Ախլաթյան նախկին գյուղը, որը գտնվում է այժմյանից 300-400 մ հարավ, 1931թ. ապրիլի 28-ի երկրաշարժից հիմնահատակ ավերվել է, ավելի քան 100 մարդ զոհվել են (զգալի տուժել էր նաև 1896թ. երկրաշարժից) և բնակիչները տեղափոխվել ու նոր գյուղ են կառուցել:
Համեմատաբար քիչ է տուժել սբ Սարգիս եկեղեցի, որի ավերակները գտնվում են հին գյուղատեղում: Այս եկեղեցուն կից 1894թ. մեծահարուստ և բարերար Ծատուրյանի հովանավորությամբ գործել է ծխական դպրոց:
Գյուղի տարածքում կան մ.թ.ա. 2-1 հզմ դամբարանադաշտեր, գերեզմանոցներ, «Խաչի գյուղ» կոչվող գյուղատեղի, որում կա խաչ կոչված մահարձան դամբարանը:
Ախլաթյանում է ծնվել պատմաբան, հնագետ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Մարուս Ստեփանի Հասրաթյանը (1902-1979թթ.):

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 179 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2011թ. հունվարի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 678 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 905 գլուխ,
- խոզեր՝ 45 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 453:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 135հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3519 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3439 հա, որից՝
- վարելահող՝ 747 հա, բազմամյա տնկարկ՝ 1 հա, խոտհարք՝ 42 հա, արոտ՝ 1456 հա, այլ հողատեսք՝1193հա
- բնակավայրերի հողեր՝ 57 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6 հա,
- ջրային հողեր՝ 7 հա